# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 2

**ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/34 ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ապրանքների (հանրային գրադարանների համար համակարգիչների, բազմաֆունկցիոնալ տպիչների և պրոյեկտորների) գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի**

**Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 12.01.2023 թ. ժամը 15:00-ին էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:**

**Գնահատող հանձնաժողով՝**

Հանձնաժողովի նախագահ՝ Աստղիկ Մարաբյան
Հանձնաժողովի անդամ՝ Նազիկ Հովասափյան
Հայկ Սարգսյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Արսեն Սողոմոնյան

**1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.**

**1.1** Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

**2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.**

**2.1** Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

| Հ/Հ | Մասնակիցների անվանումները |
|---|---|
| 1 | Ա/Ձ Ամալյա Գալոյան |
| 2 | «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ |
| 3 | «Սիգմա էլեկտրոնիքս» ՍՊԸ |
| 4 | «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ |
| 5 | «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ |
| 6 | «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ |
| 7 | «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ |

**3. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.**

3"1 **Ա/Ձ Ամալյա Գալոյանի և «Սիգմա էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտերը կազմվել և ներկայացվել են հրավերի պահանջներին համապատասխան:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.**

**4.1** ԷԱՃ-ի ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

| Հ/Հ | Գնման գինը, ՀՀ դրամ | Մասնակիցների անվանումները | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ա/Ձ Ամալյա Գալոյան | «ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ | «Սիգմա էլեկտրոնիքս» ՍՊԸ | «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ | «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ | «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ | «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ |
| | | Վերջնական առաջարկված գինը, ՀՀ դրամ | | | | | | |

| | | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ-ն | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ-ն | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ-ն | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ-ն | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ-ն | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ-ն | Առանց ԱԱՀ | Ներառյալ ԱԱՀ-ն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | **10000000** | **5870000** | **7044000** | **5950000** | **7140000** | **6080000** | **7296000** | **6160000** | **7392000** | **6999000** | **8398800** | - | - | - | - |
| 2 | **1450000** | **864975** | **1037970** | **976000** | **1171200** | **876650** | **1051980** | - | - | **1000000** | **1200000** | **1155825** | **1386990** | - | - |
| 3 | **1300000** | - | - | - | - | **989000** | **1186800** | - | - | **1000000** | **1200000** | - | - | **1078000** | **1293600** |

5. **Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին**

5.1 Մասնակիցների կողմից ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման արդյունքների արձանագրման նպատակով կասեցնել նիստը և շարունակել այն հանձնաժողովի կողմից փաստաթղթերը հրավերով սահմանված ժամկետում ուսումնասիրելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն ընթացակարգի հրավերի 8.9 կետի սահմանված ժամկետում՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն Վազգեն Սարգսյան 3, Կառավարական տուն 2, 6-րդ հարկ, 609 սենյակ հասցեում:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 22.01.2024 թ. ժամը 15:00-ին**

**6. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության մասին.**

**6.1 Ա/Ձ Ամալյա Գալոյանի** կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը, սակայն դրանք չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես.

**6.1.1** 1-ին չափաբաժնով առաջարկվող ապրանքի /համակարգիչ ամբողջը մեկում/ ամբողջական նկարագրում բացակայում է ֆիրմային անվանումը:

**6.1.2** 2-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի /տպիչ սարք, բազմաֆունկցիոնալ, A4, 18 էջ/րոպե արագության/ ամբողջական նկարագրում բացակայում է ֆիրմային անվանումը, իսկ տեխնիկական բնութագրում նշված չէ հրավերով պահանջվող՝ արտադրողի պաշտոնական երաշխիքային սպասարկման կենտրոնի տվյալները:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**6.2 «Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտում բացակայում են հրավերով պահանջվող մասնակցի իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը համաձայն Հավելված N 1.3-ի և 3-րդ չափաբաժնով առաջարկվող ապրանքի /կոունկաձև պրոեկտոր/ ամբողջական նկարագիրը, իսկ ներկայացված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու Դիմում-հայտարարությունը /Հավելված N 1/ հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**7. Գնահատման գործընթացի կասեցման մասին**

7.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ կասեցնել գնահատման գործընթացը և առաջարկել **Ա/Ձ Ամալյա Գալոյանին** և **«Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ին** մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել սույն արձանագրության 6.1 և 6.2 կետերում արձանագրված անհամապատասխանությունները:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

7.2 Հանձնաժողովի նիստը շարունակել մասնակիցների կողմից սույն արձանագրության 6.1 և 6.2 կետերում արձանագրված անհամապատասխանությունները շտկելուց հետո՝ բայց ոչ ուշ քան 2024 թ հունվարի 30-ին, ժամը 12:00-ին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**Գնահատող հանձնաժողովի նիստը շարունակվեց 30.01.2024 թ. ժամը 12:00-ին**

**8. Գնման գործընթացի գնահատման ընթացքում արձանագրված անհամապատասխանությունների շտկման մասին.**

8.1 **Ա/Ձ Ամալյա Գալոյանի** կողմից սահմանված ժամկետում շտկվել են հանձնաժողովի կողմից սույն արձանագրության 6.1-րդ կետում արձանագրված անհամապատասխանությունները և շտկված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

8.2 **«Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ**-ի կողմից սահմանված ժամկետում չեն շտկվել հանձնաժողովի կողմից սույն արձանագրության 6.2 կետում արձանագրված անհամապատասխանությունները:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**9. Տվյալներ առաջին տեղ զբաղեցրած, այդպիսին չճանաչված և մերժված մասնակիցների վերաբերյալ.**

9.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածը, 1-ին տեղ զբաղեցրած և բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից.

**1-ին չափաբաժնի մասով** ընտրված մասնակից ճանաչել **Ա/Ձ Ամալյա Գալոյանին,**

**2-րդ չափաբաժնի մասով** ընտրված մասնակից ճանաչել **Ա/Ձ Ամալյա Գալոյանին**:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

9.2 Հիմք ընդունելով սույն արձանագրության 8.2 կետը՝ մերժել **«Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ**-ի հայտը **3-րդ չափաբաժնի մասով**՝ հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

9.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը՝ մերժել.

- **«ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ**-ի, **«Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի, «ՔՈՄՓ ՊՐՈ» ՍՊԸ-ի** և **«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի** հայտերը **1-ին չափաբաժնի մասով,**
- **«ԿՈՄՊԳԱՐԱՆՏ» ՍՊԸ**-ի, **«Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ-ի, «ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի և «ՅՈՒԷՆ ՍՈՒՊՈՐՏ» ՍՊԸ-ի** հայտերը՝ **2-րդ չափաբաժնի մասով,**
- **«ԷԼ ԸՆԴ ԷՎ» ՍՊԸ-ի և «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ-ի** հայտերը **3-րդ չափաբաժնի մասով:**

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

**10.Գնահատման արդյունքների մասին**

10.1 Հրապարակել 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը, որից հետո ընտրված մասնակիցներին ԷԱՃ-ով գնումների կազմակերպման կարգին համապատասխան ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

10.2 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ գնման գործընթացը 3-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած, պայմանագիր չի կնքվում հիմնավորմամբ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

10.3 Հրապարակել գնման ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

10.4 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ կետը՝ գնման ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարվելու մասին հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում պատվիրատուի ղեկավարին ներկայացնել **«Սիգմա Էլեկտրոնիքս» ՍՊԸ**-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ որոշման նախագիծ:

***Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:***

Գնահատող հանձնաժողով՝

_____ Աստղիկ Մարաբյան

_____ Նազիկ Հովասափյան

_____ Հայկ Սարգսյան

_____ Արսեն Սողոմոնյան /քարտուղար/